«Հաստատում եմ»

«Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ Մ.Վ.Մանուկյան

«18» սեպտեմբեր 2024թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ Յուրիկի Ալեքսանյանի «Հաստ աղու տեղային տարածված քաղցկեղի (T4) վիրահատական բուժման բարելավման ուղիները» թեմայով, ԺԴ 00.15 «Վիրաբուժություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Թեմայի արդիականությունը

Վերջին տասնամյակում նկատվում է հաստ աղու քաղցկեղի բուժման արդյունքների զգալի բարելավում, պայմանավորված սկրինինգային ծրագրերի լայն կիրառմամբ, ախտորոշման եղանակների բարելավմամբ, մուլտիմոդալ բուժմամբ, արդյունավետ քիմիա և տարգետ թերապիայի օգտագործմամբ: Դժբախտաբար հիվանդների մի մասի մոտ ախտաբանությունը հայտնաբերվում է հարաբերական ուշ փուլերում, երբ ուռուցքի տեղային զգալի տարածումը դժվարեցնում է արդյունավետ բուժման կազմակերպումը, բերելով անբավարար արդյունքների: Վերջինիս հետ կապված շարունակվում են վիճարկվել բազմաթիվ հարցեր կապված հաստ աղու տեղային տարածված քաղցկեղով հիվանդների վիրահատական բուժման (հաստ աղու մասնահատման և լիմֆադենէկտոմիայի ծավալների), հետվիրահատական բարդությունների կանխորոշիչ գործոնների, հիվանդության տեղային և հեռակա ռեցիդիվների առաջացման և հիվանդության ելքի վրա ազդող բնութագրերի վերաբերյալ: Աշխատանքում իրականացվել է խորացված վիճակագրական վերլուծություն, միա- և բազմագործոն վիճակագրական վերլուծության միջոցով,

որոշվել են անկախ գործոններ, որոնք թույլ են տալիս ադեկվատ և ճշգրիտ պլանավորել վիրահատական բուժումը: Բացի այդ, համեմատվել են վիրահատական ընթացքի մի շարք առանձնահատկություններ (լիմֆադենէկտոմիայի ծավալը, աղիքային անաստամոզների ձևավորման առանձնահատկությունները և այլն), որոնք ունեն պրակտիկ նշանակություն և կարող են առաջարկ հանդիսանալ այս ախտաբանությամբ զբաղվող վիրաբուժական կլինիկաներում կիրառման համար:

Աշխատանքը և ստացված տվյալները

Ատենախոսը հավաքագրել է հետազոտության մեջ տեղ գտած 203 հիվանդների հետազոտության տվյալները, ուղեկցող հիվանդությունները, նախկինում տարած վիրահատությունները: Կատարվել է հաստ աղու տեղային տարածված քաղցկեղով 203 հիվանդների բուժման արդյունքների վերլուծություն: Հիվանդները հավաքագրվել են շուրջ 15 տարիների ընթացքում (2004-2018թթ.): Ընդ որում 2010թ-ից հետո կատարվել են որոշակի տեխնիկական փոփոխություններ, որոնք բարելավել են բուժման արդյունքները:

Ուսումնասիրության են ենթարկվել բազմաօրգան մասնահատումների արդյունավետությունը, ռեցիդիվի և հեռակա արդյունքների վրա ազդող գործոնները: Կատարվել է վերջիններիս միա և բազմագործոն վերլուծություն:

Եզրակացություն գլխում հստակ պարզաբանվել են կատարված աշխատանքի արդյունքները, որոնք բավարար հիմք են հանդիսացել անհրաժեշտ հետևություններ և գործնական առաջարկներ կատարելու համար:

Հեղինակի կողմից ստացված արդյունքների գիտական և գործնական նշանակությունը

Առաջին անգամ ՀՀ-ում հարաբերական մեծ կլինիկական նյութի վրա ուսումնասիրվել են հաստ աղու տեղային տարածված քաղցկեղի վիրահատական բուժման մոտակա (վիրաբուժական) և հեռավոր (օնկոլոգիական) արդյունքները:

Աշխատանքի նպատակն է հաստ աղու տեղային տարածված քաղցկեղի բուժման անմիջական և հեռավոր արդյունքների բարելավումը:

Աշխատանքում ատենախոսը կատարվել է գրականության տեսության ինքնուրույն վերլուծություն, լաբորատոր և գործիքային հետազոտական տվյալների համադրում և մեկնաբանություն, ինչպես նաև կատարել է ստացված արդյունքների վիճակագրական վերլուծությունը:

Վերլուծությունից տրամաբանորեն բխել են եզրահանգումները և գործնական խորհուրդները:

Աշխատանքն ունի կարևոր գիտագործնական նշանակություն: Գործնական խորհուրդների կիրառումը կարող է բարելավել հաստ աղու տեղային տարածված քաղցկեղի բուժման արդյունքները:

Ատենախության թեմայով հեղինակի հրապարակումների բնութագիրը

Ատենախոսության հիմնական դրույթները տեղ են գտել միջազգային և տեղական գիտաժողովներում և ամսագրերում՝ 5 տպագիր աշխատանքներում և բանավոր զեկույցներում: Ամսագրերի հիմնական մասը ներառված են ԲՈԿ-ի կողմից առաջադրված՝ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական կոչման հայցորդների ատենախոսությունների հիմնական արդյունքների հրատարակման համար առաջարկվող ամսագրերի ցուցակում: Երկու հոդված տպագրվել է 1-ից ավել ազդեցության գործակից ունեցող (Impact factor) ամսագրերում և բազմիցս ցիտվել է այլ հեղինակների կողմից:

Հրապարակումներն ամբողջությամբ արտացոլում են ատենախոսության աշխատանքի բովանդակությունը:

Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը

Ատենախոսությունը շարադրված է 106 էջերի վրա: Բաղկացած է ներածությունից, գրականության տեսությունից, կլինիկական նյութի բնութագիրը և հետազոտության մեթոդները գլխից, սեփական հետազոտության արդյունքները ներկայացնող գլխից, ամփոփումից, եզրահանգումներից, գործնական խորհուրդներից, գրականության ցանկից: Նյութը մշակվել է 22 աղյուսակի և 4 գծապատկերի օգնությամբ: Գրականության ցանկը ներառում է 138 սկզբնաղբյուր:

Եզրահանգում

Անդրանիկ Յուրիկի Ալեքսանյանի ատենախոսական աշխատանքը քննակվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ գիտական խորհրդի թիվ 2 նիստում 2024թ. Սեպտեմբերի 18 –ին:

Պաշտոնական գրախոս՝ ԵՊԲՀ Վիրաբուժության թիվ 3 ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Ալեքսանդր Արմենի Ուզանկիչյան,

Խորհրդի նախագահ՝ «Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ գործադիր տնօրեն, բ.գ.դ. պրոֆեսոր Միքայել Վլադիմիրի Մանուկյան,

Խորհրդի նախագահի տեղակալ՝ «Էրեբունի» ԲԿ գլխավոր տնօրենի տեղակալ վիրաբուժության գծով, ընդհանուր և կրծքային վիրաբուժության բաժանմունքի վարիչ, բ.գ.թ. Արա Վահանի Վարդանյան,

Գիտ. Քարտուղար՝ «Էրեբունի» ԲԿ նյարդաբանական և նյարդավիրաբուժական կլինիկայի ղեկավար, բ.գ.դ. պրոֆեսոր Եղունյան Մամիկոն Ա.,

Խորհրդի անդամներ՝ Հարությունյան Յուրի Ա. - «Էրեբունի» ԲԿ ընդհանուր և լապարոսկոպիկ վիրաբուժության բաժանմունքի վարիչ, ԵՊԲՀ Վիրաբուժության թիվ 3 ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ.,

Մինասյան Հարություն Լ. - ԵՊԲՀ Վիրաբուժության թիվ 3 ամբիոնի վարիչի պ/կ, բ.գ.թ., դոցենտ,

Վարդանյան Արտակ Ս. - ԵՊԲՀ Վիրաբուժության թիվ 3 ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.,

Ֆանարջյան Սերգեյ Վ. - «Էրեբունի» ԲԿ ուրոլոգիական կլինիկայի ղեկավար, բ.գ.դ., պրոֆեսոր:

Նիստին ներկա էին խորհրդի 10 ամդամներից 8-ը:

Քննադատական դիտողություններ

Ատենախոսական աշխատանքի գրախոսության ընթացքում լուրջ դիտողություններ չեն եղել: Ոճական և ուղղագրական սխալները, որոնք առկա են

աննշան քանակությամբ, չեն ազդում ներկայացված նյութի իմաստի և աշխատանքի ընկալման ամբողջականության վրա:

Այսպիսով, Անդրանիկ Յուրիկի Ալեքսանյանի «Հաստ աղու տեղային տարածված քաղցկեղի (T4) վիրահատական բուժման բարելավման ուղիները» թեմայով, ԺԴ 00.15 «Վիրաբուժություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքը ավարտված գիտական աշխատանք է, որում հեղինակի կողմից առաջադրված դրույթներն ու գործնական առաջարկությունները կարող են որակվել որպես գիտական նվաճում վիրաբուժության մեջ:

Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացրած թեկնածուական ատենախոսության բոլոր պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակ Անդրանիկ Յուրիկի Ալեքսանյանը արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի կոչմանը:

Աշխատանքը քննարկվել և միաձայն հավանության է արժանացել «Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի 2024թ. Սեպտեմբերի 18-ի գիտական խորհրդի նիստում (արձանագրություն թիվ 2):

«Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ
գործադիր տնօրեն, բ.գ.դ. պրոֆեսոր Մ.Վ.Մանուկյան

«Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ
գլխավոր տնօրենի տեղակալ վիրաբուժության գծով,
Ընդհանուր և կրծքային վիրաբուժության
բաժանմունքի վարիչ, բ.գ.թ. Ա.Վ.Վարդանյան

ԵՊԲՀ Վիրաբուժության թիվ 3 ամբիոնի
պրոֆեսոր, բ.գ.դ. Ա.Ա.Ուզանկիչյան